

# Եդեմական ծաղիկը



Exported from Wikisource on 08/04/20

# Եղեմական Ծաղիկը

←

[Բարեկենդանը](#)

[Անբան  
Հուշին](#)

→

[Հովհաննես  
Թումանյան](#)

[ [221](#) ]

1911

## Եղեմական Ծաղիկը

Ժամանակով մեր աշխարհքում մի մարդ է լինում: Էս վաճառականը ունենում է մի աղջիկ, անունը՝ Ծաղիկ: Ծաղիկ որ ծաղիկ, Էնքան քնքուշ, Էնքան նախշուն, Էնքան սիրուն է լինում:

Հերը անշափ սիրելիս է լինում աղջկանը: Մի անգամ էլ օտարություն գնալիս հարցնում է .

-Ի՞նչ կուզես քեզ համար բերես:

Թե՛ եղեմական ծաղիկը կուզես ինձ համար բերես:

-Լավ,- ասում է,- կբերես:

Գնում է, աշխարհքից աշխարհք անց է կենում, իր առուտորն անում է, իր գործը պրծնում, ուզում է աղջկա համար էլ եղեմական ծաղիկը գտնի, որ տուն գա: Դես է հարցնում եղեմական ծաղիկ, դեն է հարցնում եղեմական ծաղիկ, ոչով չի իմանում, թե ինչ բան է եղեմական

ծաղիկը կամ որտեղ է բացվում: Վերջը մի ծեր մարդ է պատահում: Էս ծեր մարդը մի ճամփա է ցույց տալի, ասում է՝ Էս ճամփով որ գնաս, Էսինչ տեղը կգտնես քո հարցրած ծաղիկը: Բայց զգույշ կաց Միպտակ դևից, նա եղեմական ծաղկին հսկում է:

Հորը սիրտ է: Ծերունու ցույց տված ճամփեն բռնում է, գնում: Գնում է, գնում, շատ է գնում, թե քիչ, դուրս է գալիս Էնտեղ, որտեղ բացվում է եղեմական ծաղիկը: Հենց հասնում է, ծաղիկը պոկում է թե չէ՝ մի հողմ, մի փոթորիկ է վեր կենում, փոթորկի հետ հայտնվում է մի հրեշ: Մարդ ասես, մարդ չի, գազան ասես, գազան չի, բայց գազանի նման մոնչում է .

-Ո՞ր պոկեցիր իմ ծաղիկը . . . քո մեծը է հիմի . . . -Քո մահն է հիմի . . . -  
ձեն է գալի ամեն կողմից . . .

Մարդը ոչ մեռած, ոչ կենդանի՝ հրեշի առաջն է ընկնում:

-Ների՛ր,- ասում է,-ո՛վ հզոր . . . իմ աղջիկն էր ուզել . . .

-Կներեմ,-կանչում է հրեշը,-միայն Էն պայմանով, որ Էդ աղջիկը ինձ տաս:

-Համաձայն եմ:

- Որ համաձայն ես, քեզ եմ բաշխում քո կյանքը: Գնա: Հենց որ ձեր տան դիմացի սարը սիպտակի, Էդ իմ նշանն է, կգամ Ծաղկին տանելու:

Դու մի ասի՛՛ Միպտակ դևը ինքը՝ հրեշն է, որ կա: Վաճառականը վերադառնում է տուն: Աղջիկը միամիտ

առաջն է վագում, վգովը փաթաթվում:  
Աղջիկը նայում է, տեսնում է՝ էս ծաղկի  
թերթի վրա՝ մի դագաղի պատկեր, գլխի  
է ընկնում, որ միջում բան կա, իսկ հերը  
թաքցնում է, թե ինչ ծաղիկ է և ինչ է  
պատահել: Հերը համբուրում է,  
եղեմական ծաղիկը տալիս իրեն, իսկ  
պատահած դեպքն ու իր խոստումը  
թաքցնում է: Թաքցնում է, բայց ինքն իր  
մեջ միտք է անում ու տխրում: Քանի  
օրերն անց են կենում, էնքան ավելի է  
տխրում: Մի առավոտ էլ վեր է կենում  
տեսնում՝ իրենց տան դիմացի սարն  
արդեն սիպտակել է: Լաց է լինում:  
Պատճառը հարցնում են. էլ չի  
կարողանում ծածկի, պատմում է, թե՛  
հապա չեք ասի՛լ՝ էսպես-էսպես բան է  
պատահել, ես էլ խոսք եմ տվել, հիմի  
Միպտակ դեր գալու է, Ծաղկին տանի:

-Բան չկա, հայրիկ- ասում է  
Ծաղիկը,- դու լաց մի լինի, ես կերթամ  
Միպտակ դևի հետ, ինչ կլինի, կլինի:

Այնինչ Միպտակ դեր արդեն դուռը  
կտրել է ու մոնչում է .

- Ո՛ր է Ծաղիկն, ո՛ր . . . ինձ  
տո՛ր . . .

Մոնչում է, ու նրա սառը շնչից  
դողում են ծառերը, աշխարհքը՝  
գունատվում . ի՛նչ պետք է անեին խեղճ  
մարդիկը: Ջուգված, գարդարված,  
եղեմական ծաղիկը ձեռքին դուրս է  
գալի Ծաղիկը, անձնատուր լինում  
Միպտակ դևին, որ չարախինդ սուլոցով  
ու ագահ ոռնոցով, սառով, սևով, հողմի  
թևով իսկույն հափշտակում է, տանում:  
Տեսնում է Մասիսի մեծ վիհը: Էնտեղ,  
Մասիսի էն մեծ վիհում, էն անմատչելի,

միշտ մոայլ ու միշտ սառն աշխարհքում  
կանգնած էր իր սառցեղեն ապարանքը:  
Էն ապարանքից իջնում էր նա, սառով ու  
սարսափով աշխարհքը պատում,  
հափշտակում ամեն կյանք ու  
կենդանություն: Ծաղիկին էլ տանում է,  
փակում էն բյուրեղյա ապարանքում:

Էսպես ամիսներ են անց կենում: Մի  
անգամ էլ, գարնան սկզբին, երբ  
Միպտակ դեր տանից դուրս է գնում,  
աղջիկը վեր է կենում, փախչում: Ետ է  
գալի դեր, տեսնում է՝ Ծաղիկը չկա:  
Կատաղում է, հավաքում է իր բոլոր  
դիվական ուժն ու մրրկի նման սուրալով,  
օձի նման սուլելով՝ ընկնում է ետևից:  
Աղջիկը արդեն Արագածի ստորոտն է  
լինում հասած: Ետ է նայում, տեսնում է՝  
Միպտակ դեր գալիս է: Գալիս է, ո՛նց է  
գալիս, աստված ետ ու հեռու անի, ոնց  
որ մարտի քամի լինի: Սարսափից ճշում  
է, օգնություն է կանչում: Կանչելու հետ,  
աստծու հրամանով, առաջը մի դուռն է  
բացվում: Էն դռնովը մտնում է սարի  
մեջն, ու կրկին դուռը փակվում է դևի  
առաջին:

Ավելի է կատաղում Միպտակ դեր .  
իր լայն թևերով բամփում է Արագածի  
գագաթին ու մոնչում .

- Ո՞ր է Ծաղիկն, ո՞ր . . . ինձ  
տո՞ր . . .

Սա էստեղ թող մոնչա, մենք գնանք  
Ծաղիկի ետևից, տեսնենք՝ էն  
կախարդական դոնից որ մտավ, ինչ  
եղավ:

Ծաղիկը էն կախարդական դոնից  
ներս է մտնում թե չէ՝ դուրս է գալի մի

դրախտական այգի, որտեղ  
հագարավոր ձայներ երգում են .

Ջնրուխտ պալատում, ոսկի  
դագաղում,  
Պառկած է չարի ուժով  
կախարդված,  
Պառկած է Արին ոչ մեռած,  
ոչ քուն,  
Ու աշխարհքն ամեն սև սուգ  
է մտած:

Պառկած է մինչև օրը  
ցանկալի,  
Էն պայծառ օրը, երբոր նա  
կըգա,  
Կըգա նոր կյանքով ու նոր  
սիրով լի,  
Կարտասպի անույշ ու  
համբույր կըտա:

[224] Առաջ է գնում Ծաղիկը, հանկարծ  
այգին լցվում է գվարթ աղմուկով, ու  
տարածվում են ուրախ երգի ձայները .

Ահա եկավ, հասավ չքնաղ  
Իր թագուհին, իր սիրելին,  
Հիմի կելնե պաղ դագաղից  
Մեր քաջ Արին-Արմանելին:

Հիմի կելնի թագավորը,  
Հրգոր Արին-Արմանելին,  
Ու կըժպտան վառ աչքերը  
Ողջ աշխարհքին, ծաղկին,  
ծըլին:

Հիմի կընկնի կախարդանքը  
Չար թշնամու, Միպտակ

դևի,  
Հիմի կրգա դալար կյանքը,  
Բույրը ծաղկի, շողն արևի:

Եվ ճիշտ որ, Ծաղիկը գնում է, ինչ է տեսնում. այգու մեջ մի գմբուխտ պալատ, պալատի մեջ՝ ոսկի դագաղ, դագաղի մեջ՝ մի ջահել, գեղեցիկ երիտասարդ, որ ոչ քնած է, ոչ մեռած, շունչը վրեն հագիվ տրբփում է: Տեսնում է թե չէ՝ սիրտը փուլ է գալի, էլ չի դիմանում, լաց է լինում ու կռանում է, համբուրում: Արտասուքի կաթիլներն ընկնում են երիտասարդի երեսին, հանկարծ բաց է անում աչքերն ու վեր է կենում, կանգնում, ինչպես էն դրախտում բուսած սոսիներից մինը:

Դու մի՛ ասիլ՝ հենց ինքը՝ Արին-Արմանելին է, որ կա:

- Ո՞վ ես դու, սիրուն աղջիկ,- հարցնում է Արին-Արմանելին,- և ինչպե՞ս ընկար էս աշխարհքը:

Ու Ծաղիկը կանգնում պատմում է իր գլխին եկածը, թե ինչպես ինքը գերի էր եղած Միպտակ դևին, որ այժմ էլ ետևիցն է ընկել ու հալածում է իրեն:

- Լսում եմ, լսում եմ նրա դաժան ձենը,- պատասխանում է Արին-Արմանելին:- Ինձ էլ նա է կախարդել ամիսներ առաջ ու զցել էս մահանման քն<sup>235</sup> մեջ: Էսպես է անում ամեն տարի: Պետք է Էսպես էլ մնայի, մինչև մինը խորտակեր նրա չար կախարդանքը:

Դու եղար էդ մինը: Այժմ ես դուրս կգնամ նրա դեմ:

Ասելն ու անելը մին է լինում: Առնում է կայծակի թուրը ու դուրս է գալի: Երկու թշնամի ուժերը պատահում են իրար, բացվում է օրհասական կոիվը: Չարկում են—զարկվում, երկինք ու գետինք իրար են խառնվում: Մութն ամպերում մոնչում է Միպտակ դևը, Արին—Արմանելին ահավոր որոտում ու շողացնում է կայծակի թուրը. երկիրը դողում, դողում է հիմքից: Կովի վերջում պարտված—ջարդված Միպտակ դևը վշշալով ու թշշալով, լացով ու թացով քաշվում է նորից իր մռայլ թագավորությունը, Մասիսի էն մեծ վիհը, դարձյալ փակվում է իր բյուրեղյա սառն ապարանքում: Աշխարհքը մնում է գեղեցիկ հաղթողին:

Ու աստվածային հանդես է բացվում Արաքսի հովիտում: Արին—Արմանելին պսակվում է Ծաղկի հետ: Բնությունը առատորեն փռում է իր փարթամ վարդերն ու զարդերը, ինս ու ջինս, մրջյուն ու թռչուն իրար են խառնում իրենց գվարթ աղմուկն ու աղաղակը, խաղն ու տաղը, ամենի վրա հոյակապ կամար է կապում կանաչ—կարմիրը՝ ծիածանը, իսկ նրանց վերև ճառագում, աշխարհքովը մին ժպտում է զարնան կենսատու արևը:



# About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](http://wikisource.org)<sup>[1]</sup>. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)<sup>[2]</sup> license or, at your choice, those of the [GNU FDL](http://www.gnu.org/copyleft/fdl.html)<sup>[3]</sup>.

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)<sup>[4]</sup>.

The following users contributed to this book:

- Վազգեն
- GeoO

- 
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
  2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
  3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
  4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)